

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԳԱՌՆԻԿ ԹԵԼՄԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԵՊԸ ՊԱՐՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՁԱԿՈՒՄ**

**Ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ – 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Լաուրա Հայկի Շելխյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Արմանուշ Կոզմոյի Կոզմոյան


բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Լիլիթ Մերուժանի Սաֆրաստյան

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 2-ին, ժամը 14-00-ին, ՀՀ ԳԱԱ  
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի  
Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ գրականության  
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 30-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,** բանասիրական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝  Ս. Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 1979թ. Իսլամական հեղափոխությանը հաջորդած երեք տասնամյակների իրանական պատմավեպին, որը պարսից ժամանակակից արձակի ամենամեծ մասսայականություն վայելող ժանրերից մեկն է: Որպես գրական ժանր՝ պատմավեպը դարձել է իրանցիների հայրենասիրական և ազգայնական գաղափարների հիմնական արտահայտիչներից մեկը:

Իրանական միջնադարյան արձակագրության (դասթանագրության<sup>1</sup>) և ազգային գրականության ավանդույթների շարունակումը բնավ չի խանգարել, որ այն հաղորդակից լինի համաշխարհային գրականության նորագույն գործընթացներին:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմավեպը գրականության այն ժանրն է, որը շաղկապում է սերունդների անցած ուղին՝ ընդգրկելով պատմության ողջ պրոցեսը: Ինչպես Ա. Լունաչարսկին է ասում, «Անցյալն ապրում է իր ծնած ներկայի մեջ, քանի որ ներկան համարվում է հենց այդ սկսվածի ավարտը»<sup>2</sup>:

Իրենց ստեղծագործություններում վերակենդանացնելով անցած դարերի իրադարձությունները՝ իրանցի հեղինակները ձգտում են գտնել ներկա իրականության ճշմարտացի ընկալման բանալին, հասարակությանը հուզող աշխարհայացքային, բարոյական և քաղաքական այն կարևոր ու արդիական խնդիրների լուծումը, որոնք անցյալում ևս հուզել են իրենց նախնիներին, իսկ մեր օրերում ներկայանում են նոր ժամանակների «հագուստով»: Ուստի, պարսից ժամանակակից պատմավեպերի արտաքննապես արկածային-այարական<sup>3</sup> կամ սիրային-կենցաղային շղարշով պատված թեմատիկայի ենթատեքստում անթեղված է դրանց բուն գաղափարական հենքը: Այս ստեղծագործություններից շատերն իրենցից ներկայացնում են վեպ-

---

<sup>1</sup> Ծանոթություն: Դասթան՝ բոց. պատում, պատմվածք, պատմություն, վեպ: Սակայն այստեղ գործածվում է ժողովրդական դյուցազներգական արձակ պատում իմաստով:

<sup>2</sup> Луначарский А., Философские поэмы в красках и мраморе// Вопросы философии, 1965, № 12, с. 112.

<sup>3</sup> Ծանոթություն: Բոց. այար՝ խորամանկ, ճարպիկ մարդ, սակայն հասարակական ընկալմամբ այարները մեծահոգի ավազակներ են՝ արժանապատվության, մարդկայնության, կարիքավորին օգնելու, իրենց պաշտպանությանը հանձնված անձի կամ ապրանքի՝ ամանաթի պահպանման հարցում անձնվեր պարտքի զգացումով ու պատասխանատվությամբ: Խաղաղության ժամանակ կողոպուտով ու թալանով զբաղվող այարական խմբերը պատերազմների ժամանակ մարտնչում էին հայրենիքի ազատության և բարօրության համար: Պատմավեպերում նրանք հանդես են գալիս նաև ժողովրդական դյուցազնապատումների փառլան-դյուցազունների հատկանիշներով:

այլաբանություններ, որոնցում իրանցի պատմավիպասաններին հաջողվում է հայրենասիրություն եզրի մեջ մեկտեղել իրանականության և շիայականության գաղափարական սկզբունքները՝ որպես պատվար արտաքին քաղաքական ու կրոնական մարտահրավերների դեմ: Երկու սկզբունքի փոխլրացնող և հաջորդական խաղարկմամբ էլ լուծվում են հետևյալ խնդիրները՝ ամրապնդել Իրանի բազմացեղ միասնականությունը, թույլ չտալ կրոնական կամ պառակտիչ «գունավոր» հոսանքների մուտքը երկիր, դեռ պելին՝ վառ պահել իրանցիների մեծապետական նկրտումները Մեծ Իրանից անջատված նախկին ենթակա տարածքների նկատմամբ:

Մերձավոր Արևելքում և Իրանի հարակից երկրներում հաստատված աշխարհաքաղաքական իրադրությունը, դրանում այդ երկրի՝ «բարին ու չարը» հավասարակշռող բացառիկ դերակատարությունը պահանջ է առաջադրում դրանից բխած պատմական առաքելության ընկալումը սերմանել նաև սեփական հասարակայնության լայն շրջաններում: Իրանի՝ պատմականորեն ունեցած մարդասիրական և քաղաքակրթական ավանդույթներին հավատարիմ լինելու, մշակութասեր և մշակութարար հեղինակության պահպանման, համաշխարհային գերտերությունների և նրանց՝ Իրանին սահմանակից «կամակատար» երկրներից սպառնացող մարտահրավերներին դիմակայելու նպատակով հրամայական է դառնում վառ պահել սեփական ժողովրդի ազգայնական և հայրենասիրական զգացմունքները:

Մեզանում իրանական պատմավեպի ուսումնասիրությունն արդիական է, քանի որ բացահայտում է մեր հարևան ժողովրդի հավաքական մտածելակերպի խորքային շերտերը, հասարակական-քաղաքական տրամադրությունները: Իրանը մշակութային երևույթ է, առեղծված իր խայտաբղետ ցեղային հմակարգով, միասնականությամբ, հզոր պետականությունը պահպանելու անկոտրում կամքով և դարավոր իմաստությամբ: Պատմավեպը գրականության հենց այն ժանրն է, որում արտացոլվում են մշակութային, կրոնական, պատմական և աշխարհայացքային այն գործոնները, որոնք ապահովում են այդ բազմերանգ հավաքականությունը միասնական պահպանելու կարողությունը, ուստի ուսանելի են և օրինակելի:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել պարսից ժամանակակից պատմավեպերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման թեմատիկ ուղղվածությունը, իրանական առասպելների, ավանդապատումների վերիմաստավորումներն ու դրանցում ժամանակակից իրողությունների արտացոլումը, ազգային ինքնության դրսևորումները, պատմագիտության նվաճումների կիրառումը, փաստագրական հենքի օգտագործման չափն ու յուրօրինակությունները, հեղինակային

միջամտությունների, հերոսի ընտրության չափանիշները, միջնադարյան ժողովրդական վեպի՝ դասթանի հետ ժառանգական կապը և այլն:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Սույն աշխատանքով քննության նյութ ենք դարձրել 1979թ. Իսլամական հեղափոխությունից մինչև XXI դարի 10-ական թվականներն ընկած ավելի քան երեսնամյա ժամանակահատվածի պարսից պատմավիպագրության զարգացման ընթացքը, որը չափազանց հարուստ է թե՛ քանակական, թե՛ բովանդակային, թե՛ ժանրային բազմազանության առումով և լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Պատմավեպի այս շրջանին չեն անդրադարձել ո՛չ իրանական, ո՛չ արտասահմանյան մասնագետները:

Վերլուծության ենք ենթարկել նշված շրջանի՝ մեզ ձեռնահաս դարձած և ժանրի զարգացման ուղիներն ի ցույց դնող հնարավոր ամենաթուփազրակական վեպերը:

Թեմայի առավել ամբողջական ներկայացման շահերից ելնելով՝ համառոտ ակնարկով ատենախոսության առաջին գլխում անդրադարձ է կատարվել ժանրի՝ XX դարասկզբից մինչև 1970-ական թթ. վերջը ընկած նախահեղափոխական շրջանին ևս: Այսինքն՝ առաջին անգամ պարսից պատմավեպի պատմությունը ներկայացվում է համաբերված կերպով՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒ ՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ)**

Գործնական նշանակության տեսակետից ատենախոսության մեջ արձարձված նյութը կարող է նպաստել հայ-իրանական մշակութային համագործակցության ակտիվացմանը, դրացի ժողովուրդների հոգեկերտվածքի առավել խորը փոխըմբռնմանը, նրանց պատմության խաչվող մի շարք առանցքային հարցերի վերարժևորմանը, դրանց նորովի լուսաբանմանը, ինչպես նաև բարեկամության ամրապնդմանը: Պատմավեպի վերաբերյալ այս աշխատանքը կարող է նյութ հանդիսանալ իրանական գրականության, մասնավորապես ժամանակակից արձակի ուսումնասիրության, ճանաչման, ինչպես նաև հայերի, Հայաստանի, հարևան այլ ժողովուրդների նպատամար իրանցիների ունեցած կարծրատիպային պատկերացումների և վերաբերմունքի բացահայտման համար: Այն կարող է իրանագիտություն մասնագիտություն ունեցող բուհերի ուսանողների համար ծառայել որպես դասագիրք պարսից նոր և նորագույն շրջանների արձակի ուսումնասիրության նպատակով:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ատենախոսության մեջ որպես մեթոդական հիմք հիմնականում օգտագործվել են նկարագրական, պատմական, համեմատական, տիպաբանական և հոգեբանական վերլուծության մեթոդները: Այս տեսանկյունից են ներկայացվում վեպերի բովանդակության, պյուժեի, կառուցվածքի, ոճավորման, դասթանների պոետիկայի օգտագործման, միֆարարման (առասպելարարման), պատմական և փաստագրական նյութի շաղկապման, հեղինակների վիպասանական վարպետության խնդիրները:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ժամանակագրական առումով ատենախոսությունում քննվում է պարսից պատմավեպի զարգացման հետհեղափոխական՝ վերջին երեսնամյա փուլը՝ 1980-ական թթ. մինչև 2010-ական թթ. սկիզբը: Սակայն նյութի վերաբերյալ առավել ամբողջական և համակողմանի պատկերացում կազմելու նպատակով (ինչպես վերևում ևս նշվեց) առաջին գլխում համառոտ ակնարկով տրվել է պատմավեպի զարգացման ընթացքն ամբողջությամբ՝ սկսած XX դարասկզբից մինչև XXI դարի առաջին տասնամյակը, որից հետո հետհեղափոխական շրջանը քննարկվում է առավել հանգամանալից:

Նյութի համակողմանի ուսումնասիրության պահանջից ելնելով՝ առանձին գլխով հնարավորինս սեղմ անդրադարձ է կատարվել նաև միջնադարյան ժողովրդական վեպի առանձնահատկություններին և դրա հետ ժամանակակից պատմավեպի ժառանգական կապին:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում: Աշխատանքի հիմնական դրույթները լուսաբանվել են «Արևելագիտության հարցեր», «Մերձավոր Արևելք. լեզվաբանություն, գրականություն և պատմություն», «Իրան-նամե» և «Օրենտալիա» գիտական հանդեսներում լույս տեսած հոդվածներում: Ատենախոսության հետ կապված մի շարք խնդիրներ ներկայացվել և ամփոփվել են իրանագիտության ամբիոնում կազմակերպված սեմինարների ընթացքում:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության հիմնական մասը բաղկացած է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

## ՍԿԶԲՆԱԴՐՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրեյիս հիմնականում օգտագործվել են հայերեն, պարսկերեն, ռուսերեն և այլ լեզուներով աշխատություններ, որոնք վերաբերում են ոչ միայն պարսից ժամանակակից պատմավեպին, այլ նաև իրանական միջնադարյան և ժամանակակից արձակի զարգացման պատմությանը:

Ատենախոսության իրականացման համար օգտակար տեղեկություններ ենք քաղել իրանցի գիտնական Յ. Արյանփուրի «Ազ սաբա թա Նիմա» (Սաբայից մինչև Նիմա)<sup>4</sup>, Մ. Բահարի «Ազ օսթուրե թա թարիխ»<sup>5</sup> (Առասպելից մինչև պատմություն), իրանցի գրականագետ Մ. Մահջուբի «Աղաբիյյաթ-ե ամիյան-ե Իրան» (Իրանի ժողովրդական գրականությունը), ուկրաինացի գրականագետ Ա. Բականովի «Ժամանակակից արտասահմանյան պատմավեպը»<sup>6</sup>, տաջիկ գիտնական Կ. Չիլակի «Ժողովրդական վեպ. Աբունուսլիմնամե»<sup>7</sup>, տաջիկ հեղինակ Խ. Ջ. Շողիկիջի «Ուրդու լեզվով վեպի ժանրը և դրա զարգացումը XX դարի առաջին կեսին»<sup>8</sup> ուսումնասիրություններից, տաջիկ գրականագետ Զ. Ուլմասովայի «Ժամանակակից տաջիկական պատմավեպի ակունքները» ատենախոսությունից<sup>9</sup>, ջավանմարդների<sup>10</sup> և այարական դասի վերաբերյալ Մ. Աֆշարիի «Ֆոթովաթնամեհա վա ռասայել-ե խաքսարիե»<sup>11</sup> (Ֆոթովաթնամեններ<sup>12</sup> և խոնարհության մասին քննախոսություններ) աշխատությունից, միջնադարյան դասթաններում կրոնական թեմատիկայի ուժեղացմանը նվիրված իրանցի գրականագետ Ա. Ղարազյոզլուի «Դասթան-ե ամիյան բա ռանգ-ե մագհաբի» (Կրոնական գունավորմամբ ժողովրդական վեպը)<sup>13</sup>, Մ. Հանիֆի «Վիժեզիհա-յե դեսսեհա-յե ամիյան-ե ֆարսի» (Պարսից ժողովրդական պատումների

<sup>4</sup>Āryanpur Y., Az Nimā tā Sabā.

<sup>5</sup>Bahār M., Az osture tā tārix, Tehrān, 1998.

<sup>6</sup>Баканов А., Современный зарубежный исторический роман, Киев, 1989.

<sup>7</sup>Чиллаев К., Народный роман, Абу Муслим наме, Душанбе, 1965.

<sup>8</sup>Шодиевич Х., Жанр романа урду и его развитие до первой половины XX в., Душанбе, 2015г.

<sup>9</sup>Ульмасова З., Истоки формирования таджикского исторического романа, (Журнал - Ученые записки Худжандского государственного университета им. академика Б. Гафурова. Гуманитарные науки) № 3 / 2011 ст. 4.

<sup>10</sup> Ծանոթություն: Բոց՝ ջավանմարդ՝ ազնվազգի, քաջ անձնավորություն: Գրեթե նույնական է այար հասկացության հետ: Ջավանմարդ կոչվելու համար անձը պիտի ընդուներ այարական խմբավորումների կանոնակարգը:

<sup>11</sup>Afšāri M., Fotovatnāmeḥā vā rasāyel-e xāksārie, Tehrān, 2003.

<sup>12</sup>Ծանոթություն: Ֆոթովաթնամե՝ այարների և ջավանմարդների ռազմական եղբայրակցության կանոնագիրը: Այարներն ու ջավանմարդները պետք է լինեին ճշմարտախոս, հավատարիմ, անձնուրաց ընկեր և օգնեին անմեղ կարիքավորներին:

<sup>13</sup>Qarāgyozlu Z. A., Dāstān-e amiān-ye bā rang-e mazhabi, Gozāreš-e mirās, Dore-e dovom-e sāl-e panjom, šomāre-ye 45, xordād vā tire 2011. s. 12-15.

առանձնահատկությունները)<sup>14</sup>, Ջ. Էսֆահանիի՝ «Բարրասի-ե ռոման-ե թարիխի-ե Իրան դար չեհել սալ-ե ախիր»<sup>15</sup> (Վերջին քառասուն տարվա իրանական պատմավեպերի ուսումնասիրությունը), Հ. Բայաթի «Մեհվարիաթ-ե ղահրեմանան-ե զան դար ղեսսեհա-յե ամիանե» (Կին հերոսների առանցքային դերը ժողովրդական պատումներում) հոդվածներից<sup>16</sup>, Ջ. Սեթարիի «Սիմա-յե զան դար ֆարհանգ-ե Իրան» (Կնոջ կերպարը Իրանի մշակույթում)<sup>17</sup>, տաջիկ գրականագետ Գ. Կադիրովի «Ժամանակակից պարսից պատմավեպը»<sup>18</sup>, իրանցի գրականագետ Մ. Ղուլամի «Ռոման-ե թարիխի» (Պարսից պատմավեպ)<sup>19</sup>, Լ. Սաֆրաստյանի՝ «Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրանական գրականության մեջ»<sup>20</sup> մենագրություններից և այլ ուսումնասիրություններից ու հոդվածներից:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում է, որ պատմավեպը պարսից գրականության մեջ որպես գրական ժանր թեև համարվում է արևմտաեվրոպական գրականությունից փոխառություն, սակայն առաջին քայլերից սկսած՝ այն ստանում է ազգային «գույն ու բույր»: Հետհեղափոխական շրջանի պատմավեպը քննության ենթարկելիս, հաշվի առնելով ընդգրկված ժամանակահատվածում տպագրված պատմավեպերի մեծ քանակը (104 պատմավեպ), հիմնականում հենվել ենք դրանցից շուրջ մեկ տասնյակի՝ Խ. Մոթազեդի «Արուս-ե Բոխարա» (Բուխարայի հարսը), Մ. Մոթթի «Թայխ», Ֆ. Ֆարուղիի «Շահրիարի քիթաջ ու թախթ» (Անթազ ու անգահ արքան), «Մերաջ-ե էշը» (Սիրո համբարձում), Ն. Համեդանիի «Բարաք, էշը վա հեմասե» (Բարաք, սեր և դյուցազներգություն), «Փիշգաման-ե էթթեղլալ-ե Իրան» (Իրանի անկախության առաջամարտիկները), Հ. Մոսթամանի «Ֆեթնե-ե Շադյախ» (Շադյախի խռովությունը) և այլ վեպերի վրա:

<sup>14</sup>HanifM., Vijegihā-ye qessehā-ye amiāne-ye fārsi.( <http://sarapoem.persiangig.com/link7/amyaneh4.htm>) 08.05.2017.

<sup>15</sup>Nāseri Z., Bahrāmi P., Barrasi-ye romān-e tārixi-e Irān dar çehel sāle axir, Faslnāme-ye taxasosi-e sabkšenasi-e nazm o nasr-e fārsi (Bahār-e adab) elmi – pajuheši, sāle haftom, šomāre-ye avval, bahār 1993, šomāre-ye peyapey-e 23.

<sup>16</sup> Bayāt H., Mahvariat-e qahremānān-e zan dar qessehā-ye amiāne, Faslnāme-ye elmi-pajuheši, Naqd-e adabi, šomāre-ye 11-12, 2010, ss. 87-115.

<sup>17</sup>Setāri J., Simā-ye zan dar farhang-e Irān, Tehrān, 2011.

<sup>18</sup>Кадиров Г., Современный персидский исторический роман, Душанбе, 1982, ст. 6.

<sup>19</sup>Yolām M., Romān-e tārixi (Seyr o naqd o tahlili-e romānhā-ye tārixi-e fārsi 1284-1332), 2002, Tehrān, s. 135-139.

<sup>20</sup>Սաֆրաստյան Լ., Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրանական գրականության մեջ, Եր., 2010:



## ԳԼՈՒԽ 1.

### ՊԱՐՍԻՑ ՊԱՏՄԱՎԵՊԸ XX ԴԱՐՈՒՄ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿՉՔԻՆ

(Համառոտ ակնարկ) (Ենթագլուխներ 1.1, 1.2, 1.3)

Եվրոպական ժողովուրդների մշակույթում մոտ չորսհարյուրամյա ուղի անցած պատմավեպի ժանրը թեև Իրանում միայն վերջին հարյուրամյակում է դարձել գրական մշակույթի բաղկացուցիչ և ընթերցողների բազմաքանակությամբ, հիրավի, այն դարձել է պարսից նորագույն արձակի ամենապահանջված և առաջատար ժանրերից մեկը:

Պարսից նոր արձակի կազմավորման գործում կարևոր նշանակություն է ունեցել 1851թ. Թեհրանում հիմնված առաջին աշխարհիկ ուսումնական հաստատությունն Իրանում՝ «Դարոլֆոնունը» (Գիտության տուն): Դպրոցի շուրջ համախմբված մտավորականները ձեռնամուխ են լինում թարգմանական լայն գործունեության, ինչն էլ կանխորոշում է պատմավեպի հետագա զարգացման ուղին:

Ահմանադրական շարժման տարիներին (1905-1911թթ.) փոխվում է վերաբեմունքը պատմության հանդեպ, և հրամայական է դառնում երկրի հերոսական անցյալի ոգով երիտասարդ սերնդին նոր ու ժամանակի հասարակական-բարոյական պահանջներին համապատասխան դաստիարակելու թեման: Առաջին պլան են մղվում պատմական ուսումնասիրությունները:

Պատահական չէ, որ առաջին պատմավիպասանները նաև պատմաբաններ էին: Վեպի առաջին նմուշները պարսից արձակում իհայտ են եկել պատմավեպի տեսքով սահմանադրական շարժման տարիներին՝ որպես հասարակական-քաղաքական տեղաշարժերի արդյունք, երբ արդիական են դառնում երկրի անկախության պահպանման և գերտերությունների գաղութային ազդեցությունը թողափելու գաղափարները: Այս պատճառով էլ պատմավեպերի թեմատիկան հիմնականում պտտվում էր անցյալի այն խոշոր անհատականությունների շուրջ, ովքեր երկրի համար դժվարագույն պահերին հանդես էին եկել «փրկչի» դերում<sup>21</sup>:

Իրանական պատմավեպի առաջնեկն է համարվում Մ. Խոսրովի «Շամս և Թողրա» վեպը՝ տպված 1910-1911թթ.: Պատմավեպերի քանակի ավելացմանը զուգընթաց դրանցում ավելանում է նաև զգացմունքայնությունն ու հրապարակախոսական պաթոսը, ինչը մասամբ զրկում է գրական ժանրն իր նախնական և հիմնական նպատակներից:

XX դարի 20-30-ական թթ. մեծ թափ է առնում այս ստեղծագործությունների հրատարակումը ժամանակի պարբերականներում: Անկախ ունեցած մեծ մասսայականությունից և արձանագրած հաջողություններից՝ այդ շրջանի պատմավեպերին, իրոք, հատուկ են հետևյալ

<sup>21</sup>Mirābedini H., Sad sāle dāstānnevisi-e Irān, j. 1, s. 28.

թերությունները՝ շարադրանքի ավելորդ ճգճգվածությունը, դիպաշարի անհետևողականությունը, երբեմն պատմական հերոսի ընտրության ոչ սկզբունքայնությունը, կարևոր իրադարձությունների հաճախակի ստվերումը սիրային-արկածային թեմաներով, ինչպես նաև պատմական իրադարձությունների մակերեսային պատկերումը:

Ռեզա շահի իշխանության ավարտից հետո՝ 1940-ական թթ., պատմական թեմատիկայով ստեղծագործությունները մղվում են երկրորդ պլան՝ հրատարակվելով ավելի փոքր քանակով:

Սկսած XX դարի 50-60-ական թթ.՝ գրական կյանքում որոշիչ դեր է ստանձնում ժանրի պատմակրոնական բովանդակությամբ հատվածը<sup>22</sup>: Ըստ էության՝ սա պարսից պատմավիպասանության համար նոր թեմատիկ ուղղություն է, որ ազդված է կրոնական գունավորմամբ միջնադարյան դասթաններից:

Որպես կրկնվող պատմական շրջափուլ՝ կրոնականը կամ իսլամի պատմությունը առանցքային թեմա է շարունակում մնալ նաև XX դարի 70-ական թթ. հեղինակների համար: 1980-ական թթ. հրատարակված պատմավեպերը սակավաթիվ են, ընդամենը 5 երկ: Այս թվերը խոսում են այն մասին, որ 1970-ական թթ. երկրորդ կեսին և 1980-ական թթ. ժանրը գտնվել է անկման փուլում: Ակներևաբար դա պայմանավորված էր երկիրը համակած հեղափոխական տրամադրություններով, ներքին բարդ հասարակական-քաղաքական իրավիճակով, այնուհետև՝ Իրաք-Իրան պատերազմով:

Սկսած 1990-ական թվականներից՝ իրանական ժողովուրդը դուրս է գալիս Իսլամական հեղափոխությանը և պարտադրված պատերազմին հաջորդած թմբիրից: Գրականության մեջ նոր թափով վերակենդանանում է պատմական բովանդակությամբ արձակը: Ժանրում ժառանգորդաբար շարունակվում է հեղափոխությանը նախորդած տասնամյակներին թափ առած և երկրի հասարակական կյանքում քարոզչական մեծ դերակատարություն ստանձնած կրոնական թեմատիկան: Սակայն այս տենդենցը դրսևորվում է այլևս ոչ թե XX դարակեսի գրականությանը հատուկ գեղարվեստական լուծումներով՝ ուղղակիորեն կրոնական գործիչների կենսագրության պատկերմամբ կամ իսլամի պատմության ներկայացմամբ, այլ մեծամասշտաբ այլաբանական արտահայտչամիջոցների կիրառմամբ՝ տողատակված ստեղծագործության կոմպոզիցիայում՝ կազմելով երկի հիմնական նպատակային ողնաշարի՝ հայրենասիրականի հենքը: Նմանաբնույթ վեպերում շիայական դավանանաքի սկզբունքների «գեղարվեստական» քարոզչությունը նույնացված է հայրենասիրականի, երկրի հզորության վերականգնման, արտաքին ճնշումների դիմակայման, ժամանակի իմամի (Մահդիի) սպասման և միայն նրա

---

<sup>22</sup>Սաֆրաստյան Լ., Կանանց հիմնախնդիրների ժամանակակից իրանական գրականության մեջ, Երևան, 2010, էջ 26:

վերադարձով բռնության դեմ պայքարի ավարտի, արդարության հաստատման, ազգային իդեալների կյանքի կոչման գաղափարների հետ:

Ժամանակակից հասարակական խնդիրների արձարծունը այլաբանական միջոցներով կազմում են այն հիմնական առանցքը, որով ժամանակակից պարսից պատմավեպը ոչ միայն կանգնում է նոր հարթության վրա, այլ նաև ստանում է յուրօրինակ ազգային դիմագիծ:

1990-ից մինչև 2010թթ. ընկած ժամանակահատվածում տպված վեպերի գեղարվեստական որակը ևս դրական տեղաշարժեր է գրանցել՝ համեմատած մինչհեղափոխական շրջանի ստեղծագործությունների հետ: Դրանց մեծ մասը վերածվել է վեպ-այլաբանությունների՝ իրենց բազմաճյուղ սյուժեներով և կոմպոզիցիոն բարդ կառույցով, համաշխարհային գրականության նորամուծություններին հետևելու, դրանց համաքայլ լինելու գնահատելի ձգտմամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրի հզորության վերհուշով և իրանական ինքնության զարթոնքով պայմանավորված՝ հետհեղափոխական պարսից պատմավեպում ամենից շատ անդրադարձ է կատարվում Իրանի պատմության Աքեմենյան, Սասանյան և Սեֆյան արքայատների տիրապետության ժամանակաշրջանին:

## **ԳԼՈՒԽ 2.**

### **ԴԱՍԹԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ**

#### **ՊԱՏՄԱՎԵՊԸ (ենթագլուխներ 2.1, 2.2.)**

Ուսումնասիրելով պարսից հետհեղափոխական շրջանում ստեղծված պատմավեպերը՝ գալիս ենք այն եզրակացության, որ դրանց և միջնադարյան դասթանների միջև առկա է «ժառանգական» կապ: Պատմավեպը մեծ մասամբ նյութ է քաղում ոչ թե գրադաշտական դասթանից, այլ իսլամական դարաշրջանի հերոսական պատումներից, որոնց հերոսները ոչ թե առասպելական ծնունդ ունեն, այլ պատմական իրական անձինք են: Զրադաշտական առասպելից ժամանակակից վեպերի կոմպոզիցիայում պահպանվում է բարու և չարի առասպելական (այլաբանական) հակամարտության կաղապարը:

XX դարավերջի և XXI դարակզրի պարսից պատմավեպը, հավատարիմ մնալով միջնադարյան դասթանագրության ավանդույթներին, դարձել է ինքնօրինակ և զուտ ազգային գրական երևույթ՝ բավական հեռանալով պատմավեպի մասին Արևմուտքում ընդունված ընկալումներից<sup>23</sup>:

Պարսից պատմավեպերում նկատվում է նաև դասթանների պոետիկայի փոխառում: Զրոօրինակ՝ շրջանակային արձակի ավանդույթը, որի կիրառման ականատեսն ենք լինում «Իրանի անկախության առաջամարտիկները»,

---

<sup>23</sup> Литература социалистических стран, итоги, тенденции развития, задачи изучения// Вопросы лит. 1986, № 1, ст. 32-33.

«Թայիս», և այլ պատմավեպերում: Դասթանների պոետիկայի ազդեցությունը պատմավեպի վրա ցույց է տալիս, որ գեղարվեստական գրականությունն իր գոյության բոլոր էտապներում էլ զարգանում է որպես մեկ շղթա, որի օղակները մշտապես փոխկապակցված են: «...Հնի ու նորի հարաբերակցությունը պարսից պոեզիայի զարգացման բնականոն ընթացքի դրսևորումներից ամենակարևորն է»<sup>24</sup>:

Պատմավեպերում նախընտրելի է համարվում դասթաններից փոխառնված սուֆիական-միստիկական սովերաքողով պատված այարական-արկաճային թեմատիկան: Սրան ավելանում է տամներկուիմամական-շիայական գաղափարաբանությունը, ինչը համապատասխանում է այսօրվա Իրանի թե՛ ներքին, թե՛ արտաքին կրոնական-քաղաքական առաջնայնություններին:

Պատահական չէ, որ վիպասաններն ընթերցողների հայրենասիրական զգացմունքները խրախուսելու նպատակով իրենց հերոսներին կերտում են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք ունեցել են VIII դ. ազատագրական շարժման առաջնորդներ Աբու Մուսլիմը, Մուկաննան և Բաբաքը:

Կարևոր խնդիր է հեղինակների կողմից պատմագիտության նվաճումների օգտագործումը, ինչը, ցավոք, միշտ չէ, որ գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա: Համաշխարհային գրական նոր տենդենցներին համաքայլ լինելը բնավ չի խանգարում, որ այս ստեղծագործությունների ոգին շարունակի մոտ մնալ ժողովրդական դասթանների էպիկական ոգուն, որտեղ գլխավոր իդեալներն են՝ հայրենասիրությունը, մարդու բարոյական վեհ հատկանիշները, ազնվամտությունը, հավատարմությունը, իր նմանին կարեկից լինելու կարողությունը և բարու հաղթանակին ծառայելը:

### **ԳԼՈՒԽ 3.**

#### **ԱՌԱՍՊԵԼԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ (ենթագլուխներ 3.1, 3.2, 3.3)**

1990-ական թթ. կեսերին Իրանի գրականության մեջ իր դերը վերահաստատած պատմավեպն աչքի է ընկնում պատմական առասպելների՝ նորօրյա մարտահրավերներին համահունչ վերիմաստավորումներով<sup>25</sup>: Նախկին ձևի մեջ վերիմաստավորված իրանական առասպելն իր երկիմաստությամբ և նախասահմանված բովանդակությամբ ծառայում է ժամանակակից իրականության մասին խոսքն առավել խորն ու ընդգրկուն արտահայտելուն: Պարսից հետհեղափոխական պատմավեպերում առավել հաճախ առասպելականացման ենթարկված կերպարներից են Աբու Մուսլիմը և նրա

<sup>24</sup> Կոզմոյան Ա., Խոմեյնիի պոեզիայի առանձնահատկությունները պարսից գրական ավանդույթների համատեքստում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2003, հ. 22, էջ 284-289:

<sup>25</sup> Սաֆրասոյան Լ., Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրանական գրականության մեջ, Երևան, 2010, 112:

հետևորդները (VIII դ.): Բարու և չարի հավերժական պայքարի կողը կրող այս կառուցվածքում էլ վերահիմաստավորված է հայրենիքի ազատության համար մարտնչող ահուրամազդայական (բարի) ուժերի պայքարը ահրիմանական (չար) ուժերի դեմ, որ հանդիպում ենք ի դեմս արաբական, թյուրքական, մոնղոլական զավթիչների Խ. Մոթազեդի «Քուխարայի հարսը», Ն. Համեդանիի «Իրանի անկախության առաջամարտիկները», «Բաբաբ, սեր և դյուցազներգություն», Հ. Մոսթաանի «Շադյախի խոտվությունը», Մ. Մոթիիի «Թայխ» և այլ պատմավեպերում: Վերոհիշյալ պատմավեպերում սյուժեի զարգացմանը զուգահեռ սկզբնական զրադաշտական բարու և չարի հակամարտության առասպելական շրջանակային ձևը միախառնվում է շիայական՝ աշխարհում արդարության հաստատման իմամական-մահդիական առասպելի կառույցին: Դրա ակնառու օրինակն է Աբու Մուսլիմին ու նրա հետևորդներին շիայական-մահդիական հատկանիշների վերագրումը: Մահդիի թաքուցման (անհետացման) առասպելի կառուցվածքում առասպելացած զորավարի կերպարի վերիմաստավորման տիպիկ օրինակ է Աբու Մուսլիմի մահը որպես «թաքուցում» բնորոշելը:

Աբու Մուսլիմի զինակիցներից առավել հզոր հակաարաբական շարժում է կազմակերպում Հաշեմ բեն Հաքիմը՝ «Նախշաբի դիմակավոր մարգարեն»: Մերօրյա Իրանի գրեթե ինքնաբավ կենսապահովումն արտաքին աշխարհի կողմից երկարամյա շրջափակում-սահմանափակումների պայմաններում ևս համադրելի է Նախշաբի բերդի անառիկության առասպելին: Սասանյան շրջանից լքված բերդի ընտրությունը պատահական մտահղացում չէ վեպում, այլ ծառայում է որպես առասպելապատման կարևոր օղակ, և խորհրդանշում է արաբական արշավանքների պատճառով կործանված իրանական պետականությունը, որն իր սպասված նորոգիչներով վերածվելու է ազատագրական-արդարահաստատ պայքարի իսկական հնոց-պատվարի: Բերդն ուսումնասիրելիս «Նախշաբի կեղծ մարգարեին» ուղեկցում են նրա 12 զինակիցները: Զինակիցների 12 թիվը ևս պատահական չէ: Այս ձևը զուգահեռվում է իսլամի մարգարեի և 12 իմամների հետ: Առասպելական շրջանակ-կառույցը մղում է ընթերցողին մտածել, որ նրանք են կրում զարդաշտական շրջանից եկած աստվածատուր իշխանության «Ֆարրը»: Զրադաշտական «Ֆարրի» զուգահեռն է իսլամական շրջանի իմամաթի «օձյալ» լինելու գաղափարը:

Հայրենասիրական նույն մոտիվներով է հագեցած Ն. Համեդանիի «Բաբաբ, սեր և դյուցազներգություն» պատմավեպը: Այստեղ Բարու և չարի հակամարտության առասպելական շրջանակ-կառույցում կրկին ահրիմանական չար ուժերի դերում հանդես են գալիս արաբ զավթիչները: Պատմական իրադարձությունների թատերաբեմն է Իրանի Ատրպատական նահանգը: Կրկին զրադաշտական դուալիստական առասպելական շրջանակ-կառույցը վերիմաստավորվում է Մահդիի փրկչական խորհրդով:

Դիտարկված վեպերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարսից հետհեղափոխական պատմավեպում թե՛ իսլամական, թե՛ նախաիսլամական շրջանի առասպելների և կրոնական ավանդապատումների վերիմաստաբանումը դառնում է պատմավեպի գաղափարական-գեղարվեստական բնութագրիչներից մեկը:

Գրականության մեջ արմատացած ավանդույթի համաձայն՝ փահլևան և այլ հերոսները կա՛մ կողք կողքի են հանդես գալիս, կա՛մ վարքագծի մեջ գրեթե չեն տարբերվում իրարից: Քսանմեկերորդ դարակազմի մերձավորարևելյան աշխարհաքաղաքական իրավիճակը յուրաքանչյուր իրանցուց պահանջում է հող-հայրենիի անվտանգությունն ու ամբողջականությունը համարել աստվածառաք «ամանաթ», որի պահպանումը սրբազան պարտք է:

Պարսից հետհեղափոխական պատմավեպերում հեղինակները փորձում են առասպելի վերիմաստաբանման (միֆարարման) հնարավորություններն օգտագործելով վեր հանել ողջ դարաշրջանի համապատկերը, կերտել հայրենասիրության, մարդկայնության և արժանապատվության անանց արժեքներ կրող հերոսների տիպարներ, որոնց միջոցով երկիրն իր պատմության տագնապալի շրջափուլերում վերագտել է խաղաղությունը, ամբողջականությունն ու միասնությունը:

Պարսից հետհեղափոխական պատմական արձակուրդիականությունն վայելող դավանաբանական, հայրենասիրական և մարդասիրական գաղափարները հաճախ որպես «ներքին տեքստ» շերտավորում են ժամանակակից իրանցի պատմավիպասանների նախընտրած պատմական թեմատիկան և ուղեկցում հերոսին: Կողավորված խոսքի տրադիցիաներ ունեցող պարսկալեզու գրականության մեջ դրանք կարող են հանդես գալ որպես յուրօրինակ «գաղափարական շրջանակներ», որոնք իրենց ձգողականությամբ միահյուսում են ամենատարբեր սյուժեներ ունեցող պատմություններ:

Դրական հերոսի կերտման գործում իրանցի պատմավիպասանները հակված են վեհ արժեքներով զինելու առավելապես իրանական ծագում ունեցող հերոսներին: Ըստ այդմ՝ թյուրքական և արաբական ծագմամբ հերոսները, որպես կանոն, հիմնականում կաղապարվում են բացասական, իսկ հույները՝ արժանավոր և իմաստուն հակառակորդի կերպարում: Բարու և չարի պայքարում հայերին վերապահվում է առավելապես բարու դերակատարություն: Ուշագրավ է մանավանդ հայուհու կերպարը, որ արձագանքվում է պարսից գրականության մեջ ամենափրված հերոսուհիներից մեկի՝ Շիրինի կերպարից: Այն կարծես ելակետային նշանակություն ունի հայուհու կերպար կերտած գրեթե բոլոր իրանցի հեղինակների մոտ:

Հայուհու կերպարը նոր չէ պարսից պատմավիպասանության մեջ: Այն մեկ օղակն է կազմում ընդհանուր այն շղթայի, որ գալիս է ժանրի

սկզբնավորումից, իր հաստատուն տեղը զբաղեցնում նախահեղափոխական արձակ ստեղծագործություններում և փոխանցվում հետհեղափոխական գրականությանը: Հայուհուն վերագրված դրական հատկանիշները ճիշտ հակառակն են թրքուհիներին բնութագրական դարձած չարի կամ կախարդի կերպարի<sup>26</sup>:

Հայերի՝ Իրանի բարեշենության սյուներից լինելու հանգամանքն է ընդգծված Ֆ. Ֆարրոդիի «Անգահ ու անթագ արքան» վեպում<sup>27</sup>: Հայ զորավարն ազնվության և քաջության լուսապսակով է օժտված Մ. Մոթիի «Թայիս» նովելաչարի «Հասբիսից խաչը» պատմական նովելում<sup>28</sup>:

Սահմանափակ թվով ստեղծագործությունների դիտարկումն իսկ վկայում է, որ բարու և չարի հակամարտության սկզբունքով շրջանակված պարսից պատմական արձակում հայերին ու Հայաստանին վերապահված է դրական առաքելություն:

#### **ԳԼՈՒԽ 4. ՆԵՐԺԱՆՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՐՍԻՑ ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ (ենթագլուխներ 4.1, 4.2)**

Համաշխարհային գրականության վերջին զարգացումները ցույց են տալիս, որ պատմավեպի ժանրային «մաքրությանն» ու «ինքնավարություններին» այլևս փոխարինելու են գալիս նոր կառույցներ: Այս իմաստով պատմավեպը բավականին ճկուն և դինամիկ զարգացող ժանրի հատկանիշներ է դրսևորում: Այժմ այն ոչ թե սոսկ անցյալի մասին վեպ է, այլ արձակի ժանրերի՝ վեպի, վիպակի, պատմվածքի, նովելի և դրանց ենթաժանրերի բույրով հանդես եկող մի ընդարձակ հասկացություն: Այստեղ միահյուսվում են էպիկականը, լիրիկականը և դրամատիկականը, որոնք հանդես են գալիս չափազանց յուրահատուկ համակցությամբ: Ոճաարտահայտչական համակարգի մի կողմում էպոպեական ընդգրկումը և հերոսական պաթետիկան են, մյուս կողմում՝ սուր երգիծանքը կամ սարկազմը բացասականի նկատմամբ: Խ. Մոթազեդը «Բուխարայի հարսը» պատմավեպում սարկազմով է ներկայացնում թրքուհի Շահսանամի վերջին վրեժխնդրությունն արքայական պահակազորի նկատմամբ: Շահսանամն առանց որևէ մարդկային զգացմունքի սպանում է ամենայն հավատարմությամբ իրեն ծառայած իրանցի նաժիշտին: Ոչնչացնող է հեղինակի վերաբերմունքը թուրք «փահլան» Շիրվին ներկայացնելիս: Նա հակապատկերն է իրանցի փահլանների՝ զուրկ որևէ մարդկային զգացմունքից:

Դիտարկվող վեպերում գրողների երևակայությունը հետզհետե շարժվում է դեպի բազմահերոսայնությունը, իսկ ընտրված պորբլեմատիկ

<sup>26</sup>Bahār M., Az osture tā tārix, s. 577.

<sup>27</sup>Faruqi F., Šahriyāri bi tāj o taxt, s. 261.

<sup>28</sup>Motii M., Tāyis, (Salibi az sang-e yašm), ss. 63-76.

իրադարձություններում կառուցվածքային և ոճական միջոցները դառնում են ավելի զանազան: Հենց այս պատճառով էլ պարսից հետեղափոխական պատմավեպում հանդիպում ենք բազմաթիվ ժանրատեսակներ, որոնք համապատասխանում են հեղինակների գաղափարախթեփոխական հակումներին: «Իրանի անկախության առաջամարտիկները» վեպի յուրաքանչյուր մասը, որ նվիրված է հերոսներից մեկի դիմանկարի կերտմանը, ծառայում է նույն՝ Իրանի՝ Խալիֆաթի տիրապետությունից անկախացման վեպ նպատակին: Հերոսները բոլորն էլ, Իրանի տարբեր մասերում տեղական ապստամբություններ կամակերպելով, փորձել են ավարտին հասցնել ժողովրդի նվիրական բաղձանքը: Նրանցից ցանկացած մեկի գործունեությունն առանձին վերցրած կարող էր դառնալ մեկ ինքնուրույն, այն էլ բավականին մեծամասշտաբ պատմավեպի նյութ, սակայն հեղինակը որոշել է մեկ վեպում ընդգրկել ավելի մեծ ժամանակաշրջան, ժողովրդական ապստամբության ավելի ընդարձակ տարածություններ՝ ցույց տալու համար, որ անկախության համար պայքարը եղել է համաիրանական և չի սահմանափակվել լոկալ մի փոքր տարածքում կամ կարճատև ժամանակաշրջանում:

Ժամանակակից հեղինակներից ոմանք քաղաքական ենթատեքստով վեպերում պատմության վերաբերյալ սեփական մեկնաբանություններով, լիրիկական շեղումներով, երբեմն էլ տեքստ ներմուծած կողմնակի արտահայտություններով հիշեցնում են իրենց մասին որպես վեպի ստեղծողի: Այս մեթոդը կարծես ուղիղ փոխառնված լինի միջնադարյան դասթանների ասացողներից, ումից և, կարելի է ասել, այնքան էլ հեռու չեն ներկայիս պատմավիպասանները: Նրանք չեն ցանկանում հանդես գալ պարզ շարադրողի դերում և ընթերցողին ներկայացնել պատրաստի գաղափարներ ու մտորումներ: Վիպասաններն այդ կերպ բացահայտորեն իրար են բախում ներկան ու անցյալը և հարցեր առաջադրում ընթերցողին, ում ներկայությունը վեպում չի խախտում վիպական արձակի շարադրման սկզբունքները: Ստեղծագործության նյութը ժամանակակից քաղաքական ենթատեքստով շաղախելու միտումը հատուկ է ժամանակակից թե՛ արձակին, թե՛ պոեզիային: «Խոմեյնիի դիվանում ավանդական սիրային, խոհական, միստիկական, փիլիսոփայական, ներբողային, երգիծական քառյակի կողքին տեսնում ենք քաղաքականը, այս պարագայում Իրանի հեղափոխությունն արտացոլողը...»<sup>29</sup>

Պարսից ժամանակակից պատմավեպերից շատերում պատմությունը սյուժեի ենթատեքստային և կերպարային հիմքով ծառայում է ներկային՝ հարելով պայմանական-պատմական-քաղաքական վեպերի ժանրին: Նրանք կարծես չեն հեռանում անցյալի փիլիսոփայությունից, բարոյական և

---

<sup>29</sup> Կոզմյան Ա., Խոմեյնիի պոեզիայի առանձնահատկությունները պարսից գրական ավանդույթների համատեքստում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2003, հ. 22, էջ 284-289:



հասարակական կոնկրետ էպիզոդներից, չեն կիրառում պատմության վերաբերյալ հակազիտական թեզեր, սակայն միտված են երկրի պատմության առանձին դրվագների վիպումը ծառայեցնելու Իրանին հուզող արդի քաղաքական առաջնայնություններին և հարևան որոշ ժողովուրդների՝ Իրանի պատմությունն ու մշակույթը յուրացնելու նկրտումների չեզոքացմանը՝ իրականացնելով յուրովի սոցիալ-քաղաքական «պատվեր»։ Դրանցից են «Բաբաք, սեր և դյուցազներգություն», «Բուխարայի հարսը», «Շադյախի ապստամբությունը», «Իրանի անկախության առաջամարտիկները» և այլ վեպեր։

«Բուխարայի հարսը» պատմավեպում հեղինակն ահազանգում է, թե ինչպես են Սամանյանների տիրույթները ժամանակի ընթացքում ենթարկվում թյուրքացման, ինչը պակաս տիպական չէ նաև Իրանի ներկա իրավիճակին։ Խ. Մոթազեդը, սակայն, վտանգը բարձրաձայնում է ոչ միայն այլաբանորեն, այլ նաև ուղիղ խոսքով՝ օրինակ բերելով Աբբասյանների պետական ապարատում թյուրքերի սողսկման պատմությունից.

ترکان در این مورد تجارب و سوابق طولانی دارند...ترکان به سرعت نه تنها سپاه بلکه ارکان دیوانهای دولت عباسی را تصرف کردند... اکنون آنان قصد دارند این بازی را در اینجا تکرار کنند.

«Թյուրքերն այս հարցում վաղեմի փորձ ունեն։ ...նրանք արագությամբ ոչ միայն (Խալիֆաթի) բանակի, այլ նաև Աբբասյանների պետական կառավարման լծակները յուրացրին։ Հիմա ցանկանում են նույն խաղն այստեղ խաղալ»<sup>30</sup>։

Չարի մարմնացում համարվող կանանց և նրանց ամուսնության, ամուսիններին կամակատար դարձնելու, իրենց դիվական ծրագրերն իրականացնելու վերաբերյալ հավատալիքները գալիս են դեռ վաղնջական շրջանի ժողովրդական հեքիաթներից։ Հենց այս շրջանակի մեջ են տեղավորվում թրքուհիների «ջադուական» ընկալումները պարսից պատմավեպերում<sup>31</sup>։

Թրքուհի Ղազալթորքան թագուհուց ծնված թագաժառանգ Սուլթանշահն իսկական չարիք է դառնում ոչ միայն հարազատների, շրջապատի, այլ նաև ողջ տարածաշրջանի համար։ Նույնը կարելի է նկատել Ղարախթայի թյուրք տիրուհի Յըլթաջի կողմից Թեքեշին սիրահետելու դրվագում։ Հեղինակի բնորոշմամբ «որձի սպասող էգ վագրը» (Յըլթաջը) բաց չի թողնում իրենից ռազմական օգնություն ակնկալող Թեքեշին «նվաճելու» պահը։ Օգնությունը տրամադրվում է լոկ այն պայմանով, որ Խորեզմի տիրակալը պարբերաբար «հյուրընկալվի» իրեն։ Թեքեշին հետաքրքրում է ոչ թե խանուհին, այլ սեփական պետության ճակատագիրը, ուստի որոշում է անձնատուր լինել Յըլթաջի կամքին.

<sup>30</sup>Motazed X., Arus-e Boxārā, ss. 331-332:

<sup>31</sup> Bayāt H., Mahhariat-e qahremānān-e zan dar qessehā-ye amiāne, Faslnāme-ye elmi-pajuheši, Naqd-e adabi, šomāre-ye 11-12, 2010, ss. 87-115.

«تصميم اكيد گرفت و پيش خود حكم كرد كه در راه مقصود بزرگش هر چه پيش آيد گناه نخواهد بود»

«Որոշեց, որ մեծ նպատակի ճանապարհին ինչ էլ պատահի, մեղք չի համարվի»<sup>32</sup>:

«Շաղպախի խոտվությունը» և «Բուխարայի հարսը» վեպերում Խ. Մոթազադը և Հ. Մոսթասանը վեր են հանում իրանցիների հուսահատ պայքարը թյուրքական համառ սողոսկման դեմ, որը նոր կերպավորմամբ շարունակվում է անգամ այսօր մնալ արդիական խնդիր: Թեմայի բազմակի արծարծումն արդեն խոսում է երկրի մտավորականության կողմից վերահաս սպառնալիքի գիտակցման մասին:

Ժանրի զարգացման ներկա փուլում «Բուխարայի հարսը» վեպը հանգուցային դերակատարություն ունի: Այն համընդգրկուն, ժողովրդի շուրջ երեքհարյուամյա պատմության, հասարակական-քաղաքական կյանքի բեկումնային, վճռորոշ իրադարձություններն ընդհանրացնող վեպ-էպոպեա՝ դյուցազնավեպ է: Հեղինակը լիրիկական շեղմամբ չի ընդունում Սամանյանների ընտրած քաղաքական ուղեգիծը, երբեմն հեղինակային ակնարկներով քննադատում է այն, հերոսների բերանով մեղադրում թյուրք վարձկանների հանդեպ դրսևորած չափազանց անզգույշ, ոչնչով չարդարացված և աններելի վստահությունը, սակայն հիմնահատակ չի ոչնչացնում նրանց դերը իրանական պետականության և մշակույթի վերականգնման գործում:

«Անթագ ու անգահ արքան» վեպում համաիրանական իղձերի իրականացման՝ միասնական պետության վերականգնման և դրա պահպանության խորհրդանշական դերում հանդես են գալիս լորերը, որ անձնվեր և անշահախնդիր պայքարում են երկրի միասնության և անկախության հենքը դառնալու վեհ առաքելության ճանապարհին:

Վերջին շրջանի վեպերի մի մասի էպիկական չափանիշը համարվում է ո՛չ սյուժետային «ծառի» աճը, ո՛չ էլ գեղարվեստական տարածության բազմամարդությունը: Էպոպեայի տարածական զարգացումը հաճախ արդեն փոխարինվում է կոնֆլիկտի ինտենսիվությամբ և լարվածությամբ, որում բազմամարդ շարադրանքի մեջ աչքի են զարնում պատմական պայքարի հորձանուտում ներդրված հասարակական կարծիքի և հերոսների փիլիսոփայական, բարոյական խորը որոնումները մարդու ճակատագրի վերաբերյալ:

Վեպ-էպոպեայի հատկանիշներ են դրսևորվում նաև Ն. Համեդանիի «Բաբաք, սեր և դյուցազներգություն» պատմավեպում, որտեղ գլխավոր հերոսի՝ Բաբաքի կերպարում է արտացոլվում ողջ դարաշրջանի դրամատիզմը՝ աղքատություն, հալածվածություն, պայքար, հաղթանակներ, հետո պարտություններ և դավաճանություն:

<sup>32</sup>Mostaān H., Fetne-ye Šādyāx, s.179.

Հաճախ վիպավոր դարաշրջանի բնորոշիչների մեջ առաջ են մղվում գիտակցական և զգացական ասպարեզի էլեմենտները: Շատ վիպասաններ ցանկանում են խորն ուսումնասիրել մարդկության ճակատագիրը և պատմավեպի հիմնական նյութ են դարձնում աշխարհայացքային ու հոգևոր բնույթի խնդիրները: Հենց այսպիսի խնդիրների շուրջ էլ կառուցվում են ստեղծագործությունների կենտրոնական կոնֆլիկտները, որոնք ծառայում են գլխավոր հերոսների բարոյական և աշխարհայացքային կողմնորոշումների բացահայտմանը:

Հերոսների ներաշխարհում փիլիսոփայական նյութի լոկալացմամբ հեղինակներն առավելապես գնում են դեպի քնարապատմողական մեթոդների: Այստեղ մեծ տեղ է զբաղեցնում մարդու ներկայի, ապագայի և ընդհանրապես նրա ճակատագրի խնդիրը<sup>33</sup>, ինչը տեսնում ենք նաև Ֆ. Ֆարուդի «Անթագ ու անգահ արքան» վեպում: Այստեղ այսրուսի Ախթարը հայտնվում է բարոյական ծանր դրության մեջ, փորձության է ենթարկվում նրա կանացի ու այսրական արժանապատվությունը: Հերոսի ներաշխարհը բեկումնային փոփոխությունների մեջ է, վիրավորանքն ու վրեժի զգացումը խեղդում են նրան, սակայն այսրական մտածելակերպն ու վարքը չեն սպանել նրա մեջ կնոջը: Նա կանացի զգացմունքների ու այսրական արժանապատվության սահմանագծում լուրջ երկընտրանքի մեջ է: Մոհսենի նկատմամբ զգացմունքները տեղի չեն տալիս, իսկ նա ամեն գնով ցանկանում է ավարտին հասցնել սկսած գործը՝ բնում խեղդել չարը, որպեսզի անկաշկանդ իրեն նվիրաբերի ընտանեկան կյանքի բերկրանքին: Նրա աչքի առջև բռնություն է և կամայականություն, ինչն անհանդուրժելի է այսր կնոջ համար: Ախթարի պայքարը բնավ ինքնանպատակ չէ, այն կրում է ոչ թե անհատական, այլ հասարակական բնույթ: Աստիճանաբար փլվում են նրան հասարակությունից արհեստականորեն պատնեշող նախապաշարմունքները, որոնք գալիս էին արդարության հաստատման համար պայքարող մարդու կրոնական ու այսրական պարտքի զգացումից:

Մեր աչքի առջև կոնֆլիկտ է զարգանում հասարակության երկու բևեռի՝ մարդասեր, բոլորանվեր անհատի և անձնապաշտ ավարառուի միջև: Այս ամենի մեջ առաջ է մղվում վեհ մարդու գաղափարը, որը պարսից գրականության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Լորական ցեղի ներկայացուցիչ պարզամիտ Քարիմ խանը ևս սկզբնապես առևտրական բանով ճանապարհներին դարանակալող ավարառու ավազակ է եղել: Սակայն, հետզհետե ուժ և միջոցներ կուտակելով, ներքաշվում է միջավատական բախումների մեջ և ընթերցողի աչքի առջև ավազակից վերաճում հայրենիքի ճակատագրով մտահոգված գործչի: Քարիմ խանը ևս կրում է «ազնվամիտ ավազակների»՝ այսրների դասին հատուկ ներքին բարոյական կանոններ: Հենց նրա ձեռքում է գտնվում Նադիրշահի

<sup>33</sup> Ивашева В., Новые черты реализма на Западе, ст. 264.

սպանությունից հետո ներքին բախումներում ծվատվող երկրի միասնության բանալին: Լոր «ավազակապետը» միավորում է երկիրը, սաստում կենտրոնախույս բոլոր ուժերին և հայրենիքը համարում այսրի համար սրբազան «ամանաթ», որը պետք է պահել, պահպանել, մինչև ասպատեզ իջնի երկրի իրական տերը՝ գահի օրինական ժառանգորդը:

Այս կարգի վեպերում հերոսի ներաշխարհի և մտորումների բացահայտմամբ վեր է հանվում պատմության տվյալ հատվածի փիլիսոփայությունը: Հեղինակը հերոսների՝ կրոնական, պետական և բարոյական խնդիրների շուրջ դատողություններով ընդհանրացումներ է անում նաև իր դարաշրջանի խնդիրների շուրջ:

Հաշվի առնելով իրանցի պատմավիպասանների՝ այլասացության նկատմամբ դրսևորած բացառիկ հակվածությունը՝ ուսումնասիրված վեպ-այլաբանություններում կարելի է մատնանշել պատմավիլիսոփայական վեպին բնորոշ բազմաթիվ տարրեր, նույնիսկ եթե վեպն ընդհանուր առմամբ ունի ժանրային այլ պատկանելություն:

Վերջին շրջանում վիպասանները ձգտում են հնարավորինս շատ գեղարվեստական կառույց ներմուծել սեփական մտորումները, ինչպես նաև գիտական որոնումների էլեմենտները՝ անմիջապես ցույց տալով ուսումնասիրության նյութ քաղելու և դրա վերլուծության պրոցեսը: Այս առումով տեղին է հիշել պարսից միջնադարյան դասթանագրության ավանդույթների դերը, որտեղ դասթանասացը, ըստ իր ճաշակի և իրադարձությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի, ազատորեն հավելում էր կատարում պատումի մեջ: Այժմ գրական այս հնարքը համընկնում է համաշխարհային գրականության մեջ ակտիվացող փաստագրականության մեթոդին և պարսից ժամանակակից պատմական արձակում վեարակենդանանում նորովի:

Իրանցի պատմավիպասանները գեղարվեստական շարադրանքի մեջ ոչ միայն սեփական մտորումներն ու մեկնաբանություններն են կիսում ընթերցողի հետ, այլ նաև օգտագործում են գիտական ապարատին հատուկ հղման և ծանոթագրության միջոցներ: Սկզբնաղբյուրային փաստաթղթի և գեղարվեստական մտահղացման շաղկապումը տարբեր ստեղծագործություններում չափազանց յուրովի է: Պարսից պատմական բովանդակությամբ ստեղծագործություններում փաստագրության տարրերի ուժեղացմամբ էական դեր է սկսում խաղալ պատմողի (վիպողի) կերպարը՝ որպես ուշադիր հավաքողի և մեկնաբանողի:

Փաստաթղթային սկզբնաղբյուրների գործածումն առավել ընդգրկում է այնպիսի վեպերում, որոնց թեմատիկան ներքուստ սերտորեն առնչվում է մեր ժամանակներին: Անմիջապես սկզբնաղբյուրից հղում կատարելը պարսից պատմավեպին տալիս է ինտելեկտուալ բնույթ: Առաջին հայացքից թվում է, թե սկզբնաղբյուրային ներմուծումները խաղում են զուտ սպասարկու դեր, սակայն

հղումները տեղայնացնում են իրադարձությունները ժամանակի և տարածության մեջ և բացում դրանց առանձնահատկությունները:

Դատողություններ անելով Դաղիդի, Ֆիրդուսի, Հաֆեզի, ստեղծագործությունների և դրանցում արծարծված թեմաների շուրջ, որ կապված են այդ շրջանի Իրանի պատմական իրավիճակի և իրադարձությունների հետ, հեղինակները նրանց կյանքը ներկայացնում են և՛ գիտական, և՛ գեղարվեստական առումով: Վիպասանները բանաստեղծների դատողականի մասին խոսում են նրանց ստեղծագործության նշանակալի հատվածները մեջբերելով, որոնք առաջին հայացքից կարծես առանձնացած լինեն պատկերվող նյութից, սակայն իրականում ուժային հող են պատրաստում, որով նյութը նոր սահմաններ է ընդգրկում և առավել նշանակալի դարձում ժամանակակից իրականության պատկերումը:

Փաստաթուղթը պարսից պատմավեպերում խաղում է ժանրակազմության առանձնահատուկ դեր: Այն հիմնավորում է այս ստեղծագործությունների հրապարակախոսական սրությունը, հեղինակային գաղափարի փաստարկվածությունը, մոտիվացնում է թե՛ պատմական, թե՛ մտացածին հերոսների վարքագիծը՝ պատկերված նյութին տալով հավաստիության զգացում:

Լեզվական տեսանկյունից պարսից պատմավեպերում ինչքան էլ պարզեցվել է ստեղծագործական լեզուն, մոտեցվել ժողովրդախոսակցականին, այնուամենայնիվ, նույնիսկ «պարզունակացված» լեզվաոճական շաղախի մեջ դեռ իր կենսունակությունը շարունակում է պահպանել միջնադարից եկող ավանդական զարդաքանդակ ոճը: Լեզվական առանձնահատկությունների բնութագրման ընթացքում անխուսափելի է չիղջատակել ընդգծված բանաստեղծականությունը, դարձվածքների անսպառ գործածումը, մամուլի լեզվին նմանությունը, ինչը ինքնին բնութագրական է իրանական գեղարվեստական լեզվամտածողությանը<sup>34</sup>:

Իհարկե, անհերքելի է, որ հետհեղափոխական շրջանի ստեղծագործություններում ևս շարադրանքի լեզվական կողմը «կաղում է», սակայն տեքստի գաղափարական-խորքային շերտերում արդեն պատմավիպասանները հաջողությամբ լուծում են իրենց առջև դրված խնդիրները: «Կաղալ» ասածն էլ հարաբերական է, քանի որ պետք չէ պարսից պատմավեպից պահանջել արևմտյան չափանիշներ, քանի որ այն առաջնորդվում է զարգացման ներքին տրամաբանությամբ, ազգային մտածելակերպով և առաջնայնություններով:

---

<sup>34</sup>Āryanpur Y., Az Nimā tā Sabā, Tārix-e 150 sāl-e adab-e fārsi, s. 254.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով պարսից հետհեղափոխական պատմավեպը՝ հանգում ենք այն եզրակացության, որ.

1. 1979թ. Իսլամական հեղափոխությանը հաջորդած երկու տասնամյակում և XXI դարասկզբին գրված պատմավեպերում ազգային ինքնությունը՝ իրանականությունը, գերակա է բոլոր ժանանակներում՝ անկախ երկրի պետական կառուցվածքից և գաղափարական ուղղվածությունից: Այստեղ ազգային ինքնության և հայրենասիրության գաղափարները հանդես են գալիս իմամաթի սկզբնունքների հետ միահյուսված՝ ընկալվելով որպես մեկ ամբողջություն:
2. Կրոնական երանգավորմամբ ժամանակակից պատմավեպերի մեծ մասի հերոսների նախատիպերը գործում են բարու և չարի զրադաշտական առասպելի վերիմաստավորված կառույցում:
3. Պարսից մերօրյա պատմավիպասանությունը մեծ մասամբ ասելիքը ռեալիզացնում է այլասացությամբ՝ կերտելով վեպ-այլաբանություններ:
4. Դասթանի ռճական հնարքների օգտագործումը նպաստում է, որ պատմավեպի հերոսների վարքն ընկալվի առասպելացված փահլևանական-այարական սխրանքների լույսի ներքո: Միջնադարյան դասթանների օրինակով պատմավեպերում նկատվում են նաև դյուցազուն կանանց կերպարներ: Սա միտված է XX դարի պարսից գրականության մեջ կնոջը որպես զոհ ներկայացնելու կարծրատիպի հաղթահարմանը:
5. Ժամանակակից պատմավեպերի ռճավորման մեջ նոր կյանք է ստացել միջնադարյան գրականությունից ժառանգված շրջանակային կառույցը, որում կենտրոնախույս պատումները միահյուսված են գլխավոր և կենտրոնաձիգ շրջանակ գաղափարով: Գրողն այդպիսով ջանում է մեկ հիմնական գաղափարի մեջ ընդգրկել պատմական ավելի մեծ ժամանակաշրջանի իրադարձություններ՝ մերթ Աքեմենյան, մերթ Սեֆյան, մերթ Ղաջարական կամ այլ շրջանից: Պատմավիպասանը պատմական անձանց մի քանի առանձին դիմանկարներից կերտում է հավաքական հերոսի՝ հայրենիքի, հավատի և մարդկային վեհ արժեքների նվիրյալի տիպական կերպար:
6. XX դարավերջի և XXI դարասկզբի պարսից պատմավեպը բարու և չարի հավերժական պայքարի զրադաշտական առասպելի կառուցվածքում է վերաիմաստավորում հայրենիքի ազատության համար մարտնչող ահուրամազդայական (բարի) ուժերի պայքարը ահրիմանական (չար) ուժերի դեմ: Չարը կամ ահրիմանականը մարմնավորված է թուրանցի, արաբ, թյուրք և մոնղոլ զավթիչների կերպարներում: Առասպելական բարի՝ ահուրամազդայական վեհ, առաքինի արժանիքներով օժտված են

միայն իրանական և որպես բացառություն՝ նաև հայկական ծագում ունեցող հերոսները:

7. Պատմավեպերում ժողովրդի ազատագրական պայքարի հերոսների սրբացումը, նրանց մահդիական-թաքուցման և փրկչական լուսապսակներով օծումը ծառայում է այսօրվա գերագույն նպատակին՝ ընթերցողի մեջ դաստիարակել հող-հայրենիի պաշտպանությունը սրբազան գործ համարելու գիտակցություն:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. Դրական հերոսի տիպարը արդի պարսից պատմավեպում «Իրան-Նամե», Երևան, 2012-2013, հտ. 44-45, էջ 163-165:
2. Հայերը և Հայաստանը ժամանակակից պարսից պատմավեպում, «Մերձավոր Արևելք. լեզվաբանություն, գրականություն և պատմություն», Հովսեփ Օրբելու ծննդյան 125 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013, էջ 101-108:
3. Պատմական առասպելները հետհեղափոխական Իրանի պատմավեպում, «Օրիենտալիա», Երևան, 2013, պրակ 14, էջ 65-74:
4. XX դարասկզբի պարսից պատմավեպը. համառոտ ակնարկ, «Արևելագիտության հարցեր» Երևան, IX, 2015, էջ 438-445:
5. Կրոնական թեմատիկայի ակտիվացումը պարսից միջնադարյան դասթանում, «Արևելագիտության հարցեր» Երևան, XI, 2016, էջ 254-269:
6. Ժողովրդական վեպից (դասթանից) պատմավեպ, «Արևելագիտության հարցեր» Երևան, XII, 2016, էջ 320-330:

## Гарник Тельманович Геворгян

### Постреволюционный исторический роман в персидской современной прозе

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 01. 07 «Зарубежная литература».

Защита состоится 02 марта 2018г. в 14.00 на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Литературоведение» при Институте литературы им. М.Абегяна по адресу: ул. Григора Лусаворича, 15, Ереван.

#### РЕЗЮМЕ

Представленная диссертация посвящена изучению персидского исторического романа постреволюционного периода. Работа основана на более десяти романах и исследованиях по этой теме. Диссертация состоит из введения и четырёх глав, которые в свою очередь делятся на 10 заголовков и списка использованной литературы.

Во введении определяются тема, актуальность, цель, новизна, задачи и рамки исследования, рассматриваются источники, в которых даны сведения о становлении и развитии персидской исторической прозы.

Большой интерес для данной работы представили исследования и монографии «Исторический роман» М. Голама, в котором наиболее полно и всесторонне рассматривается процесс становления и развития персидской исторической прозы до 1950-их гг., а также описываются восемь наиболее крупных исторических романов исследуемого периода и «Персидский исторический роман» Г. Кадырова, в котором рассматривается весь путь развития персидской исторической прозы до 1970-их гг. В исследовании средневековой народной прозы – дастанов, неопределимую роль имеют монографии «Народный роман Ирана» М. Махджуба, «Народный роман: Абу Муслим наме» К. Чилаева, «Жанр романа на языке урду и его развитие в первой половине XX века» Х. Шодиевича, диссертация «Истоки формирования таджикского исторического романа» З. Ульмасовой, статья А. Карагёзлу «Народный роман религиозной окраской», статья М. Анифа «Особенности персидских народных романов», статья З. Эсфгани «Исследование народного романа Ирана в последние сорок лет». Ценные сведения взяты из монографий «Фотватнаме: трактат о скромности» М. Авшара, «Образ женщины в культуре Ирана» Дж. Сетари, «От мифа до истории» М. Бахара, «Современный зарубежный исторический роман» А. Баканова и т.д.



Первая глава - «Персидский исторический роман вXX веке и в начале XXI века»(краткий отчет), кратко представляется история становления и развития жанра исторического романа в персидской литературе до периода исламской революции 1979 года. Третий заголовок первой главы посвящается особенностям жанра после исламской революции до 2010-их гг. Исследование показывает, что жанр исторического романа в 1970-их и 1980- их годах находился в состоянии упадка, и только начиная с 90-их гг. набирает новую жизнь, восстанавливает свою весомую роль в литературе.

Публикуется более 104 романов, в большинстве которых прославляется бывалая мощь и слава особенно Ахеменидских, Сасанидских и Сефевидских царей. Исследование показывает, что содержательная сторона и художественное мастерство романистов по сравнению с дореволюционным периодом намного выросло.

Во второй главе - «Народная литература и современный исторический роман», обсуждаются вопросы развития народного романа в средневековом Иране и его связи с современной исторической прозой. Рассматриваются исторические обстоятельства, из-за которых народные дастаны приобрели религиозную окраску. Обсуждаются вопросы общности поэтики средневековых дастанов и современных романов, а также «генетические» связи современного исторического романа с народным дастаном, ревайатом и кессе. Для показа реалий своих времен, иранские беллетристы используют методы полусказочной и героико-романтической литературы, таким образом сближаясь со сказителями народных дастанов.

Современные исторические романы из дастанов заимствовали айарско-плутовскую и приключенческую тематику, которая смешана с суфийской и двенадцатиимамской идеологией. Несмотря на это, современные иранские романисты успешно переодевают разницу между дастаном и романом. Подобно дастанам, они создают женские образы айаров. Вышесказанное никак не мешает им использовать новые тенденции мировой литературы.

Третья глава диссертации называется «Соотношение мифа и истории в современном персидском историческом романе». В этой главе обсуждаются вопросы переосмысления древних мифов в историческом романе, с целью выявления и показа сегодняшних политических и общественных проблем. В итоге эти романы превращаются в романы-аллегии. Мифы доисламско-зороастрийского периода и средневековые исламские сказания, сливаются не только с историческими событиями, но и с сегодняшней шиитской пропагандой Ирана. Самые популярные герои в сфере мифотворчества сегодняшних иранских беллетристов – это лидеры освободительской борьбы VIII в., Абу Муслим и его последователи. Они почти все сокращаются и переопределяются в мифе исчезновения имама Махди. Положительные герои этих романов в большинстве

подражают характер средневековых айаров и джаванмардов. Родина для них является священным «аманатом», данным богом на сохранение.

В романе «Невеса из Бухары» Х. Мотазеда главные герои – Абу Муслим и Хашем бен Хаким - фальшивый пророк Нахшаба (как называют его арабы) сокрализированы и представляются в образе Имама Времени – Махди. Тоже самое можем сказать и о герое романа «Предшественники независимости Ирана» Н. Хамедани. Вожди освободительной борьбы иранцев против арабского ига перевоплощаются в образах шиитских имамов, особенно Махди.

Блокада сегодняшнего самообеспеченного Ирана можно сравнить с блокадой и стойкостью крепости Нахшаба. По мнению Н. Хамедани, путь восстановления развалившейся иранской государственности и установление справедливости в целом - это пророчество ислама и имамат.

Четвертая глава - «Внутрижанровые новообразования в современном персидском историческом романе», делится на два заголовка, которые трактуют процесс слияния традиции и новаторства в литературе. В силу этого слияния, персидский исторический роман превращается в сугубо национальное литературное явление, которое далеко отошло от европейского прототипа. В нем образуются новые жанровые типы. Важную роль играет рамочная структура, наследованная от средневековой обрамленной прозы. С помощью этой манеры, иранским писателям удается охватить более широкие эпохальные просторы в истории. Система примечаний, активное авторское лирическое вмешательство, введение в текст отрывков из стихотворений великих поэтов, прямое использование исторического документа, являются достижениями персидского исторического романа постреволюционного периода. Персидская историческая проза не признает никаких установленных жанровых стандартов. Вышесказанное привело к новым жанрообразованиям в сфере исторической прозы, которые свойственны только персидскому историческому роману.

Garnik Gevorgyan

Post-Revolutionary Historical Novel in the Persian Modern Prose

Thesis for the PhD of Philology, specialty 10.01.07 “Foreign Literature”.

Defense will be held on 2 March, 2018 at 14:00, at the session of Specializes Council on Literary studies 003 of HAC in the Institute of Literature after M. Abeghyan NAS RA (address: Yerevan, Grigor Lusavorich str. 15).

## RESUME

The current dissertation is devoted to the research of Persian historical novels in the post-revolutionary period. The survey is based on more than ten novels and studies on this topic. The thesis consists of an introduction and four chapters which in their turn are divided into nine headings and a list of literature used.

Within the frameworks of the introduction the topic, relevance, purpose, novelty, tasks of the study are determined, as well the sources are examined in which information about the formation and development of the Persian historical prose is presented.

Two major studies have been of a high interest for this thesis. The first is the monograph of M. Gholam called “Historical novel” which most fully and comprehensively examines the process of formation and development of Persian historical prose until the 1950s and also eight significant historical novels of the period are described. The next study is called “Persian historical novel” authored by G. Kadirov, where the whole path of the development of Persian historical prose until the 1970s is discussed. The bellow mentioned monographs play an incredible role for the investigation of medieval folk prose-dastans: “Folk novel of Iran” by M. Mahjub, “Folk novel – Abu Muslimname” by K. Chilaev, “The genre of the novel in Urdu and its development in the first half of the 20th century” by H. Shodievich, the thesis by Z. Ulmasova called “The origins of the formation of the Tajik historical novel”, the article of A. Karagozlu “The folk novel of religious background”, M. Anif’s article entitled “Peculiarities of Persian folk novels”, Z. Esfahani’s article called “The study of the Iranian folk novel in the last forty years”. Valuable information and details are taken from the following monographs: “Fotovatname: a tractate on

modesty” by M. Avshar, “The image of woman in the culture of Iran” by J. Setari, “From myth to history” by M. Bahar, “Modern foreign historical novel” by A. Bakanov, etc.

The first chapter, “The Persian historical novel in the 20th century and beginning of the 21st century” (brief survey), is devoted to the study of the formation and development of the genre of the historical novel in Persian literature before the period of the Islamic Revolution in 1979. The third heading of the first chapter is dedicated to the characteristics of the genre after the Islamic revolution until 2010. The study carried out indicates that the genre of the historical novel in the 1970s and 1980s was in decadent phase. It began to prosper from the beginning of 1990s and re-established its significant role in Iranian literature.

The second chapter called “Folk literature and modern historical novel” examines the development of the folk novel in the middle ages in Iran and its interrelations with the contemporary historical prose. The historical circumstances and conditions are presented because of which folk dastans acquired religious features. Issues of similarities of the poetry of medieval dastans and modern novels are matter of survey as well the “genetic” relations of modern historical novel with the folk dastan, revayat and qesse are examined. To show the realities of their period, Iranian writers use the methods of semi-tale and heroic-romantic literature, thus drawing closer to the narrators of folk dastans.

The third chapter of the thesis is called “Interrelations of myth and history in the modern Persian historical novel”. Issues of reconsideration of ancient myths in historical novel are examined in the purpose of showing nowadays political and social problems. As a result these novels turn into novel-allegories. The myths of pre-Islamic Zoroastrian period and medieval Islamic stories are merged not only with historical events but also with nowadays propaganda of Shiite Iran. Most popular and famous heroes in the sphere of mythmaking of nowadays Iranian writers are the leaders of liberation struggle of 8<sup>th</sup> century Abu Muslim and his followers. Almost all of them are sacralised and reincarnated in the myth of disappearance of Imam Mahdi. The positive heroes of these novels express the characteristics of medieval ayyars and javanmards. Their homeland is supposed to be sacral “amanat” gifted by the god to preserve.

The fourth chapter has the title “Intra-genre innovations in the modern Persian historical novel”. It is divided into two headings which interpret the process of merging and integration of tradition and innovation in literature. Due to this

merger, the Persian historical novel turns into a strict national literary appearance and phenomenon, which has moved far away from the European prototype. New genre types are formed in it. Framed structure plays an important role which is inherited from medieval framed prose. This method provides Iranian writers with the opportunity to cover wider epochal expanses in history. The system of notes, intense lyrical intervention of the author, the including of examples from the poems of great poets, the direct use of the historical documents are the main achievements of the Persian historical novel of the post-revolutionary period. Persian historical prose does not recognize any established standards of genre. The above mentioned issues led to new genre formations in the historical prose, which are only peculiar to the Persian historical novel.